

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԱՍԼՈ ԱՍՈՒԽՈՒՄ

Բ.ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՅԵՅԻՆ ՄՊԱՍՈՒՄՆԵՐԸ» ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ԿՆՎԱԶԻ 10 ՏՈԿՈՍՈՎ

Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին փետրվարի 5-ին անցկացված մամուլ ասուլիսում հանրագումարեց երկրի իշխանության գլուխ անցած իր ղեկավարած «Վրացական երազանք» կուլիցիայի կառավարության գտնվելու 100 օրվա արդյունքները:



ԳՈՂԱՅԻՆ 100 ՕՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին, հանրագումարելով իր գլխավորած կառավարության գործունեության 100 օրվա արդյունքները, փետրվարի 5-ին հրավիրված մասուլիսում հայտարարեց, որ ամենամեծ նվաճումը արդարության վերականգնման սկսված գործընթացն է:

«Մենք բանտերից ազատեցինք 190 քաղաքացիական, եւս 3,5 հազար մարդ արժանացավ համաներման»,- հայտարարեց վարչապետը:

Վարչապետը որպես իր գլխավորած կառավարության հաջողություն, գնահատեց նաեւ զենքի նվազեցման քաղաքականությունը: «Մենք կարողացանք հասնել էլեկտրաէներգիայի սակագնի 21 տոկոս նվազեցման, 10 տոկոսով նվազել է վառելիքի գինը, փետրվարից 10 տոկոսով կնվազի բնական գազի սակագինը, հետագայում մենք մտադիր ենք այդ սակագինն էլ ավելի նվազեցնել: Մենք էական նվազեցման հասանք նաեւ դեղագործական արտադրանքի սակագների նվազեցման հարցում, այն կազմել է 30-ից 50 տոկոս»,- նշեց Բիծինա Իվանիշվիլին:

«Մենք դրան ավելի շուտ հասանք, քան ենթադրում էինք: Գնեթի նվազման միտումը շարունակվում

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԻՐԱՎԻՃԱԿ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՀՐԱԺԱՐՎԵՑ ԼՍԵԼ ՆԱԽԱԳԱՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԶԵԿՈՒՅՑԸ

Վրաստանի խորհրդարանի բյուրոն որոշում է կայացրել երկրի նախագահ Միխեիլ Սասակաշվիլու ամենամյա ելույթը չեղյալ համարելու մասին:

Խորհրդարանի ղեկավար Դավիթ Ուսուփաշվիլու խոսքով, նման որոշում կայացնելը պայմանավորված է Սասակաշվիլու ղեկավարած ընդդիմության կողմից նախագահի սահմանադրական իրավունքները սահմանափակելու վերաբերյալ առաջարկի մերժումով: Խորհրդարանի ընդդիմության ղեկավար Դավիթ Բաքրաձեն հայտարարեց, որ Սասակաշվիլին պատրաստ էր ելույթ ունենալ խորհրդարանում եւ մասնակցել բանավեճերին:

Ավելացնենք, որ խորհրդարանի վերոնշյալ որոշման ընդունումից հետո, ինչպես հայտարարեց Վրաստանի նախագահի մամուլ խոսնակ Մանանա Մանջալաձեն, Միխեիլ Սասակաշվիլին որոշել է նախագահական ամենամյա զեկուցմանը հանդես գալ Վրաստանի ազգային գրադարանում: Թեպետ, ինչպես հայտնի դարձավ, Վրաստանի նախագահը որոշում էր ընդունել զեկույցը հրապարակել նախագահական նստավայրից:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼՆԵՎԻԼԻՆ՝ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Վրաստանի վարչապետի մամուլ ծառայությունից հաղորդել են, որ ստորագրվել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Գիորգի Մարգվելաշվիլուն փոխվարչապետի պաշտոնում նշանակելու հրամանագիրը:



Փոխվարչապետի պաշտոնը թափուր մնաց այն բանից հետո, երբ նախարարի կաբինետի ղեկավարը պաշտոնանկ արեց Իրակլի Ալասանիային:

Մարգվելաշվիլին լրագրողներին հայտարարել է, որ իր գործառույթները կորոշի անձամբ վարչապետը, որն իրեն առաջարկանքներ կտա:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

Փետրվարի 6-ին աշխատանքային այցով Վրաստանում էր գտնվում Հայաստանի պատվիրակությունը, որը գլխավորում էր պաշտպանության առաջին փոխնախարար Դավիթ Տոնոյանը:

Պատվիրակության կազմում էին Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ, զեներալ-լեյտենանտ Էնրիկո Ապրիամովը եւ այլ պաշտոնատար անձինք:

Այցի ընթացքում, պատվիրակությունը հանդիպում ունեցավ Վրաստանի պաշտպանության նախարարության բարձրագույն ղեկավարության հետ: Վրաստանի պաշտպանության առաջին փոխնախարար Լեւան Դոլիձեի հետ քննարկվեցին երկկողմ ռազմական համագործակցության հարցերը եւ

դրա զարգացման հեռանկարները: Կողմերը կարծիքներ փոխանակեցին տարածքային անվտանգության եւ հնարավոր զարգացման հարցերի շուրջ: Հայկական պատվիրակության ընդունեց նաեւ Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան:

Նույն օրը Հայաստանի պաշտպանության նախարարության պատվիրակությունը մասնակցեց Հայաստանի դեսպանության կազմակերպած համդիսավոր ընդունելությունը՝ նվիրված Հայաստանի զինված ուժերի 21-ամյակին:

ԿԱՐԴԻԱԿԱՆԱՅՎԵՆ ՍԱՀՄԱՆԻ ԲՈԼՈՐ ԱՆՅԱԿԵՏԵՐԸ

Առաջիկա տարիներին կարդիականացվեն հայ-վրացական պետական սահմանի բոլոր երեք անցակետերը, եւ դրանց վրա կձախակի մոտ 52 միլիոն եվրո:

Այդ մասին փետրվարի 6-ին, Երեւանում «Բավրա» եւ «Նինոծմինդա» պետական սահմանի անցակետերի կառավարման կարողությունների զարգացման ծրագրի նպատակների ու հեռանկարների ներկայացման խորհրդաժողովին, ասաց Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը: «Մենք կարծում ենք, որ առաջիկա 2-3 տարիների ընթացքում իսկապես կունենանք արդիականացված, Եվրոպական միության կանաչ գրքի պահանջներին համապատասխան ժամանակակից

սահմանային ենթակառուցվածքներ»,- ասաց Բաղդասարյանը:

Ավ քարտուղարը նշեց, որ ծրագրի շնորհիվ կտրուկ կնվազեն կոռուպցիոն ռիսկերը, գրեթե կվերանան բյուրոկրատական քաշքշուկները: Նա ասաց, որ անցակետերով օրական միջին հոսքը կազմում է 904 մարդ, իսկ ծրագրի իրականացման արդյունքում այդ թիվը կդառնա 2000, տրանսպորտային միջոցների միացյալ 200 հարյուրը կդառնա 600, բեռնատար մեքենայի սահմանի կանգնելը եռակի կնվազի՝ հասնելով 25 րոպեի:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՄԵԾԱՍԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍ Ե ՔՆՆԱՐԿԵԼ ՓՈՔՐԱՍԱՍՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՈՒՂՈՒՄՆԵՐԸ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին օրենսդիր մարմնի նիստում հայտարարել է, որ խորհրդարանական մեծամասնությունը պատրաստ է քննարկել խորհրդարանական փոքրամասնության առաջարկած՝ Վրաստանի Սահմանադրությունում ուղղումներ կատարելու նախագիծը:

Խորհրդարանական փոքրամասնությունը «Միասնական ազգային շարժում» նախկին կառավարող կուսակցության ներկայացուցիչները, առաջարկել է օրենսդրության մեջ, այդ թվում՝ Սահմանադրության

Դրանով առաջարկվում է պետության հիմնական օրենքում ամրագրել երկրի արտաքին քաղաքական կուրսը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՑՆՈՒՄ Ե ՕՐԵՆՔԸ ԶԻՆԱԳՐԱՎԿԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՐԽԱՆԻԱՅԻ ԵՎ ՃԽԻՆՎԱԼԻ ՏԱՐԱԾՔԻՅ ՎՐԱՍՏԱՆ ԱՊՈՐԻՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԱՆՅԵՐԸ, ԲԱՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ, ԿՏՈՒԿԱՆԿԵՆ

Վերահիմնադրման հարցերի պետնախարար Պատառ Զաքարեիշվիլին կառավարության նիստից հետո հայտարարել է, որ կառավարությունը մտադիր է մեղմացնել օրենքը զինագրաված տարածքների մասին:



Նա ասել է, որ, գործող օրենքի համապատասխան, Աբխազիայով եւ Հարավային Օսեթիայով Վրաստանի տարածք մուտք գործող օտարերկրյա քաղաքացիներն անմիջապես կալանվում էին Վրաստանի իշխանությունների կողմից վերահսկվող տարածքում: «Նրանց դեմ հարուցվում էին քրեական գործեր, եւ նրանք տարբեր ժամկետներով կալանքի էին ենթարկվում Վրաստանի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐԸ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ Ե ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾ

Ֆինանսների նախարար Նոդար Խաղոբիձե հայտարարել է, որ Վրաստանի պետությունը, անցյալ տարվա հունվարի համեմատությամբ, ավելի է 10 միլիոն լարիով: Անցյալ տարվա հունվարին պետությունը կազմել է 451 միլիոն 700 հազար լարի, իսկ այս տարվա հունվարին՝ 461 միլիոն 800 հազար լարի: Խաղոբիձե հաղորդել է նաեւ, որ նկատելիորեն ակտիվացել է փոքր եւ միջին գործարարության շրջանառությունը:

Ըստ Խաղոբիձի, 2013 թվականին կանխատեսվում է 6 տոկոսանոց տնտեսական աճ: Արժեզրկումը, ինչպես

ենթադրվում է, կկազմի 3-5 տոկոս: Այս ցուցանիշերը բխում են Արտարժույթի միջազգային հիմնադրամի հաշվարկներից: Նախարարը նաեւ նշել է, որ գալիք տարի տնտեսական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍ Ե ԲՆԱՐԿԵԼ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒՂՈՒՄՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)


Նադրությունում ամրագրել Վրաստանի անփոփոխ կուրսը, որը վերաբերում է ՆԱՏՕ...

չը ստեղծում է սպառնալիք նրա ինքնիշխանության համար:

Փոքրամասնությունը հայտարարել է, որ եթե մեծամասնությունը պաշտպանի իր ուղղումները...

Դավիթ Ուսուփաշվիլին խորհրդարանական փոքրամասնությանը առաջարկել է

նաեւ ստեղծել հատուկ խորհրդարանական սահմանադրական հանձնադրակազմ, որը կքննարկի սահմանադրական փոփոխությունների բոլոր նախագծերը:



ԱՄՆ

ԸՆՂԱՅՆՎՈՒՄ ԵՆ ԻՐԱՆԻ ՆԿԱՏԱՍԱՐ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Իրանի կողմից միջուկային ծրագրի շուրջ աշխատանքների ընդհատման նպատակով, ԱՄՆ-ն ընդլայնում է այդ երկրի դեմ ընդունված պատժամիջոցները:

Իրանն արդեն արձագանքել է նոր պատժամիջոցների հարցով. «Դա Իրանի նկատմամբ կատարված թշնամական քայլ է»,- հայտարարել է Իրանի արտգործնախարարության ներկայացուցիչը:

ԳՈՐԾԱԴԻՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՅՆՈՒՄ Ե ՕՐԵՆՔԸ ԶԻՆԱԳՐԱՎԿԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բանտերում: Դա մենք համարում ենք անարդարացի, քանի որ Ադրբեյջանի, Հայաստանի շատ քաղաքացիներ, ովքեր հայրենիք էին վերադառնում Վրաստանով, հայտնվում էին Վրաստանի բանտերում»,- հայտարարել է պետնախարարը:

Չաքարեի շվիլին ընդգծել է, որ օրենքի նոր խմբագրումը ենթադրում է առաջին անգամ վարչական կարգով պատժի ենթարկել



օրենքը խախտողներին, քանի որ օրենքը թույլ չի տալիս, առանց Վրաստանի կենտրոնական մարմինների համաձայնության, այցելել Աբխազիայի եւ Հարավային

Օսեթիայի խամաճիկային համարապետություններ: «Իսկ եթե խախտումը կրկնվի, այդ ժամանակ նման անձանց դեմ կհարուցվի քրեական գործ»,- ասել է նա:

Վրաստանի կառավարությունը իր միտումն հավանություն է տվել այդ առաջարկությանը:

ԳՈՐԾԱԴԻՐԸ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ Ե ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցուցանիշը կլինի ավելի բարձր, շնորհիվ ներդրումների աճի:

Խաղաղության հաղորդել է, որ մայիսի վերջին Վրաստան կայցելեն Եվրամիության վեց երկրի ֆինանսների նախարարներ, նաեւ Համաշխարհային բանկի եւ Արտարժույթի միջազգային հիմնադրամի բարձրաստիճան պատ-

վիրակություններ: Խաղաղության հույս է հայտնել, որ հանդիպումներում մեկ անգամ եւս հավաստվեց միջազգային կազմակերպությունների աջակցությունը Վրաստանի հասցեին:

Ֆինանսների նախարարը մամուլ ասուլիսում անփոփոխել է ԱՄՆ իր այցի արդյունքները եւ նշել, որ Վաշինգտոնում, Բոստոնում եւ Նյու Յորքում կայացան շատ հետաքրքիր հանդիպումներ: Վրաստանի պատվիրակությունը

հանդիպումներ է ունեցել նաեւ ԱՄՆ պետդեպարտամենտում: Կողմերը անդրադարձել են Վրաստանի տնտեսության իրավիճակին, կառավարության կողմից պլանավորված բարեփոխումներին, Վրաստանի հետ համագործակցությունը շարունակելուն: Ինչպես հայտարարել է խաղաղության, ամերիկյան կողմը միանշանակ հավաստել է իր աջակցությունը Վրաստանի նոր կառավարությանը:

ՔՐԵԱԿԱՆ

Ի. ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Ե ՃԱԾՐ ՔՐԵԱԾԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ»

ՆԳ նախարար Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարել է, որ, չնայած համաճարման աննախադեպ ծավալին, ներքին գործերի նախարարությունը պահպանում է ցածր քրեածին իրավիճակ եւ ավելի է ուժեղացնում աշխատանքն այդ ուղղությամբ: Նախարարը հայտարարել է, որ ՆԳ նախարարությունն անվտանգության երաշխիք է եւ թույլ չի տա հասարակական կարգուկանոնի խախտումներ:

ՆԳ նախարարության զարգացման կարծաժամկետ ռազմավարությունը կարելի է փաստաթուղթ է, որում գերատեսչությունը հաշվի է առել արեւմտյան բարեկամների հանձնարարականները: Այս մասին փաստաթղթի շնորհանդեսի ժամանակ, որը կայացավ «Ռեդիսոն» հյուրանոցում, հայտարարեց ներքին գործերի նախարար Իրակլի Ղարիբաշվիլին:

ՆԳ նախարարության զարգացման հիմնական առաջնություններն են համակարգի ապաքաղաքականացումը, մարդու իրավունքների պաշտպանությունը, հաշվետվու-

թյան եւ աշխատանքի թափանցիկության ապահովումը, հակախտարական քաղաքականությունը, հասարակայնությանը կողմնորոշված ոստիկանության կազմավորումը եւ այլն:

Ղարիբաշվիլին նշեց, որ ռազմավարության նպատակներից մեկը նաեւ առանձին ոլորտներում գերատեսչության կարիքների բացահայտումն է, այդ նպատակներին հասնելու համար լավագույն միջոցների մշակումը: Ինչպես պարզաբանեց Ղարիբաշվիլին, այդ առումով ռազմավարության մեջ ընդգծվել են հետեւյալ կարեւոր ոլորտ-

ները. ճանապարհային եւ սահմանային անվտանգությունը, արտակարգ իրավիճակների կանխումը եւ արդյունավետ կառավարումը, միգրացիոն գործընթացների կառավարումը, թմրահամցագործությունների, կոռուպցիայի, ահաբեկչության դեմ պայքարը, որակյալ սպասարկման ապահովումը, կրթական ծրագրերի կատարելագործումը, միջազգային համագործակցության խորացումը:



ՔԱՂԱՔԱՊԵՏՆ ՈՒ ՔՆՆԻՉՆԵՐԸ ԳՈՐ ՄԱՅԻՆ ՄԻՄՅԱՆՑԻՑ

Ֆինանսների նախարարության դատախազ Թամար Կուչավան եւ քննիչ Նուզդար Սարիան քաղաքապետարանում հարցաքննել են քաղաքապետ Գիգի Ուզուլավային:

Հարցաքննությունը շարունակվել է մի քանի ժամ, որից հետո քննիչը եւ դատախազը հեռացել են քաղաքապետարանի շենքից: Նրանք լրագրողներին հաղորդել են, որ քաղաքապետը պատասխանեց

իրեն տված բոլոր հարցերին: Գործը, որի կապակցությամբ որպես վկա հարցաքննվել է Ուզուլավան, վերաբերում է ավելի քան 5.2 միլիոն լարի բյուջետային միջոցներին, որ նախատեսված էր «Թբիլսեր-

վիսգուրուկ» ընկերությունում աշխատող անձանց աշխատավարձի համար: Նրանցից շատերը միաժամանակ այլ ֆիրմաների եւ պետական հիմնարկների աշխատակիցներ էին, սակայն նրանց համար մայրաքաղաքի բյուջեից փոխանցվել էր եւս 5.245.945 լարի: Ֆինանսների նախարարության քննչական ծառայություն-

ըն այդ փաստը որակավորում է որպես բյուջետային միջոցների վատնում: Խոսքը վերաբերում է 2010-2011 թվականների ժամանակամիջոցին, իսկ Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուզուլավան 2010 թվականի սկզբին անձամբ հաստատել էր վերոնշյալ ընկերության հաստիքը եւ աշխատավարձի ֆոնդը:



ՕՔՐՈՒԱՇՎԻԼՈՒՅ ԶԱՆՎԵՅ ՎԵՐԳԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ

Դատախազությունը պաշտպանության նախկին նախարար Իրակլի Օքրուաշվիլուց հանել է վերջին՝ չորրորդ, մեղադրանքը, որը վերաբերում էր ծառայական անփութությանը: Համապատասխան միջնորդագրով դատախազությունը դիմել էր դատավորին:

Դատախազությունից պարզաբանել են, թե գործի էական քննությունը չհաստատեց, որ Իրակլի Օքրուաշվիլին կատարել է ապօրինի գործողություններ:

Նրանք: Դատախազները նշել են, որ դատարանում ապացուցվեց հետեւյալ հանգամանքը. Վրաստան բերված մարտական փամփուշտների երեք խմբաքանակից ան-

րակ էին միայն երրորդ խմբաքանակի փամփուշտները, իսկ տվյալ միջոցին պաշտպանության նախարարը ոչ թե Օքրուաշվիլին էր, այլ Դավիթ Կեզերաշվիլին:

ԿԵԶԵՐԱՇՎԻԼԻՆ ԹԱՔՆՎՈՒՄ Ե ԻՄՐԱՅԵԼՈՒՄ

Վրաստանի գլխավոր դատախազ Արչիլ Կբիլաշվիլին հայտարարել է, որ պաշտոնական թբիլիսիյն ինտերպոլի գծով միջազգային փնտրուք է հայտարարել Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Դավիթ Կեզերաշվիլու նկատմամբ եւ Իսրայելի հետ բանակցություններ է սկսել նրան Վրաստան վերադարձնելու հնարավորության մասին:

Դատախազությունը Կեզերաշվիլուն մեղադրում է Վրաստանի քրեական օրենսգրքի մի քանի հոդվածներով: Մասնավորապես, նա մեղադրվում է առանձնապես խոշոր չափով կաշառք վերցնելու եւ դրմաշորթման մեջ: Դավիթ Կեզերաշվիլին, բացի վրացականից, ունի նա-

եւ իսրայելական քաղաքացիություն: Իսկ Իսրայելի օրենսգրքում արգելվում են իր քաղաքացիներին այլ երկրների հանձնելը, ուստի վրացական կողմի նախաձեռնությունը հազիվ թե դրականորեն քննարկվի Թել Ավիվի կողմից:

ՍԻՐԻԱ

ԸՆԴՅԱՐՈՒՄՆԵՐ ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ

Սիրիայի ընդդիմության ներկայացուցիչների տեղեկատվությամբ, Դամասկոսում ընդհարումներ են տեղի ունենում ապստամբների եւ կառավարական ուժերի միջև: Առանձնապես լարված վիճակ է քաղաքի հարավային եւ արեւելյան շրջաններում:

Սիրիայի ընդդիմադիր ալյանսի ղեկավար Մուադ Ալ-Հիթթաբին հայտարարեց, որ իրենք կներժեռն իշխանության՝ զինադադարի բոլոր առաջարկությունները, եթե մինչեւ շաբաթվա վերջ բոլոր կին բանտարկյալները ազատ չեն արձակվի:

ՄԱԿ-ի տվյալներով, 2011 թվականի մարտից սկսված ընդհարումների զոհ է դարձել շուրջ 60 հազար մարդ:

ՍԵՐԲԻԱ

ԱՆՑԿԱՑՎԵՑԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը եւ Կոսովոյի ղեկավար Ատիֆետե Յահյազան բարձր մակարդակի առաջին բանակցություններն են անցկացրել 2008 թվականին ինքնավարության անկախության հռչակման ժամանակից ի վեր: Հանդիպումը փետրվարի 6-ին տեղի է ունեցել Բրյուսելում: Բանակցություններում որպես միջնորդ է հանդես եկել Եվրամիության արտաքին քաղաքականության հարցերով գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը:

Բանակցություններում խոսվել է Սերբիայի եւ Կոսովոյի իշխանությունների համագործակցության մասին:

Սերբիայի նախկին ինքնավարության անկախությունն արդեն ճանաչել է 90 երկիր, ներառյալ՝ ԱՄՆ-ը եւ Եվրամիության անդամների մեծամասնությունը:

ԹՈՒՆԻՍ

ՄՊԱՆՎԵԼ Ե ԸՆԴԴԻՍՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՌՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Թունիսում անհայտ անձի արձակած փամփուշտից սպանվել է ընդդիմության ակնառու ներակայացուցիչ Շուբրի Բալիդը: Մարդասպանի ինքնությունը դեռ չի պարզվել: Շուբրի Բալիդը Ազգային ժողովրդավարական կուսակցության ղեկավարն էր: Դեպքից հետո, սպանության համար մեղադրանքներ են հնչել վարչապետ Համադի ալ Ջաբալիի հասցեին:

Տեղի ունեցածի պատճառով, Թունիսի նախագահ Մոնսեֆ Մազրուկին չեղյալ է համարել Ֆրանսիա կատարելիք այցելությունը, նաեւ չի մասնակցել Եգիպտոսում անցկացվող Իսլամական համագործակցության գագաթաժողովին:

Ավելի քան հազար թունիսիցի հավաքվել է Թունիսի մայրաքաղաքի գլխավոր փողոցում՝ Ներքին գործերի նախարարության շենքի մոտակայքում իրենց բողոքն արտահայտելու սպանության վերաբերյալ:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ԳՅՈՒՂԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Վրաստանի կառավարությունը հաստատեց գյուղին աջակցելու ծրագիր, եւ այդ նպատակով պետությունը նախատեսված է 50 միլիոն լարի:

Տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարարությունը իրագրեց է, որ կառավարության նիստում ընդունվեց որոշում, որը կարգավորում է ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը:

Կառավարությունը որոշում է ընդունել նաեւ «Տարածքային նախագծերի եւ տեղական ինքնավարությունների նախագծե-


րի չափանիշերի եւ ընթացակարգերի հաստատման մասին, որ պետք է ֆինանսավորվեն Վրաստանի տարածքային նախագծերի հիմնադրամի կողմից»:

Տվյալ որոշմամբ, սահմանվել են նախագծերի ընտրության ընթացակարգերն ու չափանիշերը, դրանց առաջնությունը եւ նպատակահարմարությունը:

Կանոնի համապատասխան, տեղական

ինքնավարություններում կիրականացվեն բավականին ծավալուն ենթակառուցվածքային նախագծեր:

Միաժամանակ, տարածքային զարգացման նախարարությունը կառավարությանը ներկայացրել է որոշման նախագիծ, որը նախատեսում է փոփոխություններ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 28-ի որոշման մեջ: Փոփոխությունները նախատեսում են թարմացնել տարածքային զարգացման կառավարական հանձնաժողովի կազմը:



2013 ԹՎԱԿԱՆԸ՝ ԹԱՄԱՐ ԹԱԳՈՒՐՈՒ ՏԱՐԻ

Վրացական Ուղղափառ եկեղեցին 2013 թվականը հայտարարել է Թամար թագուհու տարի: Այդ մասին փետրվարի 3-ին, կիրակնօրյա պատարագի ժամանակ հայտարարել է Վրաստանի պատրիարք Իլիա երկրորդը:

Նրա խոսքերով, 2013թ. հորեյլանական տարի է, քանի որ գիտնականները համարում են, որ այս տարի լրանում է վրաց թագուհու 800-ամյակը:

«Կան նաեւ այլ ենթադրություններ, բայց գիտնականների մեծ մասը համարում է, որ դա հենց այդպես է, այդ պատճառով մենք որոշեցինք այս տարին անվանել Թամար թագուհու տարի»,- ասել է պատրիարքը:

Հարկ է նշել, որ Թամար թագուհու կառավարումը ամենահաջող շրջանն է եղել վրացական թագավորության համար:

ՎԱՐԱԿԱԾ ԿԱՐՏՈՑԻԼ ԹՈՒՐԲԻԱՅԻՑ

Գյուղատնտեսության նախարար Դավիթ Կիրվալիձեն տեղեկացրել է, որ Թուրքիայից Վրաստան է բերվել մի ամբողջ բեռնարկ (կոնտեյներ) քաղցկեղով վարակված կարտոֆիլ: Մամլո ասուլիսում նախարարը հայտարարել է, որ դա կարանտինային հիվանդություն է: Բեռը վերցվել է կալանքի տակ եւ ամբողջությամբ կոչնչացվի, իսկ այդ մասին կիրառվի արտահանած երկիրը:

Կիրվալիձեն նշել է, որ պարենի անվտանգության մասին օրենքում կկատարվեն ուղղումներ, ինչը ազատ առևտրի մասին եվրամիության հետ բանակցությունների պարտադիր պայմաններից մեկն է:

Նախարարն ասել է, որ գրանցվել են մի քանի փաստեր, երբ շուկայում, տավարի մսի փոխարեն, վաճառվել է ձիու եւ ավանակի միս:

ՋՐԱՄԲԱՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՐՉՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՋ

Ծալկայի մի քանի տասնյակ բնակիչներ մի ամբողջ գիշեր անցկացրին Թբիլիսիում, պետական գրասենյակի առջեւ: Նրանք պահանջում էին պետական սեփականությանը վերադարձնել շրջանում գտնվող ջրամբարը: Ինչպես հայտարարել են ակցիայի մասնակիցները, ջրամբարը 2010 թվականին գնել է ոմն Ջիթիան, եւ դրանից հետո իրենց արգելված է այնտեղ ծուկ որսալ: Հակառակ դեպքում, նրանց սպառնում է տուգանք՝ 500-ից մինչեւ 2000 լարի: Դրա հետ մեկտեղ, ջրամբարի նոր սեփականատերը չի հանդիպում ձկնորսների հետ եւ չի ծանոթացնում իր ձեռք բերած լիցենզիայի պայմաններին:

ՍԿՎԵՑ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՋՈՐԱԿՈՉԸ

Սկսվել է ժամկետավոր զինվորական ծառայության զարմանալի գորակոչը: Ջորակոչի մանրամասները հրապարակվեցին տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարարությունում անցկացված մամլո ասուլիսում: Հենց այս գերատեսչությունն էլ կարգավորում է գործընթացը:

Ջորակոչվում են 18-ից մինչեւ 27 տարեկան քաղաքացիները, ովքեր զինվորական հաշվառման մեջ են եւ չունեն տարկետման եւ ազատվելու իրավունք:

Ընդհանուր առմամբ, կզորակոչվի 1650 մարդ, եւ դա լիովին կբավարարի պատիժների կատարման նախարարության, ներքին գործերի նախարարության եւ պաշտպանական գերատեսչության պահանջարկները:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՐՏԵՐ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ

Գյուղատնտեսության նախարար Դավիթ Կիրվալիձեն մամլո ասուլիսում, ամփոփելով իր գերատեսչության 100 օրվա աշխատանքի արդյունքները, հայտարարեց, որ փետրվարի 11-ից կսկսվի գյուղատնտեսական քարտերի հանձնումը, որոնց օժանդակությամբ ֆերմերները կկարողանան մշակել հողը:

Նախարարը պարզաբանել է, որ սակավահող ֆերմերների համար մշակվել է երկու տիպի օգնության փաթեթ: Ընդհանուր առմամբ, գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը կօգ-

նի ավելի քան 640 հազար սեփականատերերի, ովքեր ունեն մինչեւ 5 հեկտար հողատարածք: Նրանք, ովքեր ունեն 0,25 հեկտարից պակաս տարածք, կստանան 100 լարի արժողությամբ

գյուղատնտեսական քարտ: 0,25-ից մինչեւ 1,25 հեկտար հողամաս ունեցողները կստանան 510 լարի արժողությամբ քարտ: Քարտերի օգնությամբ հնարավոր է մշակել հողը եւ ձեռք բերել գյուղատնտեսական մշակույթի 300 լարի արժողությամբ ապրանքներ ու գույք: 510 լարի արժողությամբ քարտ կստանան նաեւ այն ֆերմերները, ովքեր ունեն համանման տարածքով

տնկիների տնտեսություններ: 1,25-ից մինչեւ 5 հեկտար հողամասի սեփականատերերը կստանան 640 լարի արժողությամբ քարտ, եւ դրա օգնությամբ նրանք կարող են ձեռք բերել միայն ապրանքներ ու գույք: Գույքի եւ ապրանքների համար նախատեսված քարտերի բաժանումը կսկսվի մարտից: Ընդհանուր առմամբ, նախագծի կազմում կա ավելի քան 180 միլիոն լարի:

ՎՐԱՍԱՆ - ՌՈՒՍԱՍԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԿԱՅԱՆԱ ՓԵՏՐՎԱՐԻ ՎԵՐՋԻՆ



Վրաստանի վարչապետի Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Ջուրաբ Աբաշիձեն հայտարարել է, որ ՌԴ-ի արտաքին գործերի փոխնախարար Գրիգորի Կարասինի հետ հերթական հանդիպումը տեղի կունենա փետրվարի վերջին:

Երկկողմ հարաբերությունների կարգավորման շրջանակներում, Վրաստանի եւ Ռուսաստանի պաշտոնական ներկայացուցիչների առաջին հանդիպումը տեղի է ունեցել դեկտեմբերի 14-ին, ժնեում: Կողմերը ծրագրել

են այդօրինակ հանդիպումներ անցկացնել երկու-երեք ամիսը մեկ:

Աբաշիձեն նշել է, որ առաջին հանդիպումից հետո կողմերը պայմանավորվել են կապ պահպանել, եւ «Կարասինի հետ թվով երկրորդ հանդիպումը կկայանա փետրվարի վերջին, իսկ հանդիպման վայրն առայժմ հայտնի չէ»:

Նրա խոսքով, Վրաստանի արտահանողների միությունը ռուսական կողմին տեղեկատվություն կտրամադրի վրացական գինիների այն արտադրողների վերաբերյալ, որոնք հետաքրքրում են նրան:

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ԲԱՑՎԵԼ Ե ՎՐԱՍԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Մոսկվայում բացվել է Վրաստանի արտահանողների միության մասնաճյուղը, որը միջնորդի դեր է ստանձնել բանակցությունների եւ ռուսական շուկային վրացական արտադրանքի մատակարարումների հարցում:

«Մեր խնդիրն է օգնել վրացի գործարարներին կապի մեջ մտնել Ռուսաստանի հետ, հավաքել կոնկրետ հարկավոր փաստաթղթեր, ինչպես նաեւ օգնել արտադրանքի փոխադրման գործում: Մենք կհեշտաց-

նենք մաքսային խնդիրների կարգավորման հարցերը»,- հայտարարել է Միության Մոսկվայի գրասենյակի ղեկավար Մաքսիմ Սավչուկը՝ ելույթ ունենալով փետրվարի 5-ին Թբիլիսիում կայացած մամուլի ասուլիսում:

Նրա խոսքով, Վրաստանի արտահանողների միությունը ռուսական կողմին տեղեկատվություն կտրամադրի վրացական գինիների այն արտադրողների վերաբերյալ, որոնք հետաքրքրում են նրան:



ՄՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՇԽԱՏԵԼ

«Հանրային ծառայության մասին» օրենքում կատարվում են փոփոխություններ, որոնք կենսաթոշակառուներին հնարավորություն են տալիս աշխատել հանրային ծառայություններում: Փոփոխությունների հեղինակը խորհրդարանական մեծամասնության անդամ Դավիթ Օնոփիշվիլին է:

«Նախագիծ ընդունելու պատճառն այն է, որ վերոնշյալ օրենքի 50-րդ հոդվածը հնարավոր

ություն չի ընձեռում արտահաստիքային աշխատակից ընդունել 65 տարեկանից բարձր

որակյալ կադրերի: Նախագիծը թույլ կտա աշխատանքի ընդունել կենսաթոշակային տարիքի

արհեստավարժների եւ օգտագործել նրանց փորձը»,- նշվում է բացատրագրում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2,2 ՄԻԼԻՈՆ ՔԱՂԱՔԱՅՈՒ ՀԱՄԱՐ

Աշխատանքի, առողջապահության ու սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեյենկոն հայտարարել է, որ ընդհանուր ապահովագրությունից կօգտվի գրեթե 2,2 միլիոն քաղաքացի, որը կսկսի գործել փետրվարի վերջից եւ կավարտվի հուլիսի 1-ին:

Նա հաղորդել է, որ նախարարությունն արդեն ավարտել է երկրում գոյություն ունեցող բուժօգնությունների գրանցումը եւ ճշգրտել դրանց մասին տվյալները:

Ներկայիս ապահովագրական փաթեթը բովանդակում է երկու տեսակ ծառայություն. այց՝ ընտանեկան բժշկին եւ արձագանք՝ անհետաձգելի դեպքերին:

Իրանք լուծելու համար պետք է աշխատել համատեղ:

Հանդիպումը կազմակերպել էր ժողովրդական պաշտպանի աշխատակազմին առընթեր հանդուրժողականության կենտրոնը, ամերիկյան «Ազգային ինտեգրման ուժեղացումը» միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ:

ԱՋԳԱՅԻՆ ՓՈԹՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Հանդիպմանը մասնակցեցին օմբուդսմեն Ուչա Նանուաշվիլին եւ պետնախարարի առաջին տեղակալ Քեթեան Ցիխելաշվիլին:

Վերահստեղծման պետնախարար Պաստա Ջաքարեիշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանի ժողովրդական պաշտպանի աշխատակազմին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամների հետ:

Խորհրդի անդամների մի մասը կարծիք հայտնեց, որ հարկավոր է ստեղծել առանձին դեպարտամենտ, եւ այն կզբաղվի ազգային փոքրամասնությունների ինտեգրման հարցերով եւ անմիջականորեն կենթարկվի վարչապետին:

վել է գործառնությունների բաժանման եւ ինտեգրման հարցերով առանձին դեպարտամենտի ստեղծման աշխատանքը:

վի ու մշակույթի պահպանման, գործազրկության եւ այլ հիմնահարցերի: Ինչպես նշեց պետնախարարը, այդ հիմնահարցերը հավասար չափով հուզում են Վրաստանի բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց էթնիկական պատկանելությունից, եւ

իրանք լուծելու համար պետք է աշխատել համատեղ:

Հանդիպումը կազմակերպել էր ժողովրդական պաշտպանի աշխատակազմին առընթեր հանդուրժողականության կենտրոնը, ամերիկյան «Ազգային ինտեգրման ուժեղացումը» միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ:

Խորհրդի անդամները մոտ ժամանակներս հանդիպումներ կունենան մշակույթի եւ արդարադատության նախարարների հետ:

Ջաքարեիշվիլին ասել է, որ նախարարությունում արդեն սկս-

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԱՍԼՈ ԱՍՈՒԽՆԵՐԸ

Բ.ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՅԵՑՅԻՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

է»,- ասաց վարչապետը՝ հերթական անգամ ընդգծելով, որ «Վրացական երազանք» կուսիցիան կկատարի իր բոլոր նախընտրական խոստումները:

Վարչապետն իր գլխավորած կառավարության ծառայությունը համարում է նաեւ լավագույն բյուջեի ընդունմամբ սոցիալական հարցերի կարգավորումը: Նրա խոսքերով, նախկին կառավարության «անխոհեմ» ծախսերի կրճատման հաշվին հաջողվել է կրկնապատկել առողջապահության հատկացումները մինչեւ 633 միլիոն լարի, ապահովագրության հատկացումները մինչեւ 505 միլիոն լարի, փետրվարի մեկից Վրաստանի բոլոր քաղաքացիներն ապահովված կլինեն նվազագույն փաթեթով, իսկ հուլիսի մեկից՝ բազիսային փաթեթով:

ՎՐԱՍՏԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՄ Է ԵՄ-ԻՆ ԵՎ ՆԱՏՕ-ԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ԿՈՒՐՍԻՆ

Անդրադառնալով արտաքին քաղաքական հարցերին՝ Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին փետրվարի 5-ի հանրագումարային մամուլի ասուլիսում «ամհասկանալի» որակեց ընդդիմախոսների այդ հարցերով քննադատությունները: «Մենք հավատարիմ ենք ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին ուղղված արտաքին քաղաքական կուրսին, սակայն զուգահեռաբար սկսել ենք կարգավորել հարաբերությունները Ռուսաստանի հետ»,- նշեց նա:

Իվանիշվիլին հայտարարեց նաեւ, որ նոր կառավարությանը հաջողվեց հիանալի հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի հետ: «Ցանկանում եմ առանձնակի նշել Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Նորլանդին, որը իրական տեղեկատվություն է փոխանցում ԱՄՆ նախագահին»,- ասաց վարչապետը:

ԱՄԵՆԱՄԵԾ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԳԱՎՈՐՈՒՄ Է

Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին հայտարարեց, որ իր գլխավորած կառավարության «ամենամեծ ցանկությունը» Ռուսաստանի հետ հարաբերություններն են: «Վրաստանի նոր կառավարության ամենամեծ ցանկությունը եւ նպատակը մեր մեծ հարեւանի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների նորմալացումն է»,- ասաց Իվանիշվիլին փետրվարի 5-ին, Թբիլիսիում կայացած մամուլի ասուլիսում:

«Վրաստանի նոր կառավարության ամենամեծ ցանկությունը եւ նպատակը մեր մեծ հարեւանի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների նորմալացումն է»,- ասաց Իվանիշվիլին փետրվարի 5-ին, Թբիլիսիում կայացած մամուլի ասուլիսում: Վարչապետը Վրաստանի պատվիրակության այցը Ռուսաստան եւ ռուսական շուկա վրացական արտադրանքի վերադարձման մասին «հաջող բանակցությունները որակեց որպես ճեղքում: Այդ բանակցությունները ցույց տվեցին, որ Վրաստանի նախկին իշխանությունը ինքն էր շրջափակում վրացական արտադրանքի մուտքը ռուսական շուկա»,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքերով, ռուսական շուկայի բացումը թույլ կտա զարգացնել երկրի գյուղատնտեսության ոլորտը: Մենք շատ դրական ազդակ ստացանք մեր ամենամեծ հարեւանից եւ հուսով ենք Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերությունների հաստատման ու մեր երկրի տարածաքային ամբողջականության վերականգնման հարցում»,- ընդգծեց Բիծինա Իվանիշվիլին:

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՀԱՂՈՐԿՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԸ ՕԳՈՒՑ ԿԵՐԻ ԲՈՂՈՐԻՆ

Աբխազիայի տարածքով Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ երկաթուղային հաղորդակցության վերականգնումը դրական կլինի բոլոր կողմերի համար, բայց դրա համար ժամանակ է պահանջվում: Այդ մասին փետրվարի 5-ին Թբիլիսիում կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին:

«Ոչ մի բան տեղի չի ունենա ի վնաս մեր երկրի: Երկաթուղու վերականգնումն օգուտ կբերի բոլորին: Դա դրական գործոն կլինի, բայց դրա համար որոշ ժամանակ է պահանջվում: Ամեն ինչ կարվի փուլ առ փուլ, որպեսզի որեւիցե հարց չծագի»,- ասել է Իվանիշվիլին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՍԵՂՈՒ ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԵՔ ՀԻՄՆԱՐԱՄ

Այս մասին լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին: Նրա խոսքերով, դրանցից մեկը Ինքնուրույն հիմնադրամն է, որը կազմավորվելու է գործընկերային հիմնադրամի բազայի վրա: «Այդ հիմնադրամը կխթանի ներդրումները, եւ մենք արդեն JP Morgan ընկերության հետ քննարկել ենք դրա հիմնման ու կառուցվածքի հետ կապված հարցերը»,- նշեց վարչապետը:

Երկրորդը Վրաստանի Երիտասարդական հիմնադրամն է, որը երիտասարդ գիտնականների ֆինանսավորման համար ներդրում է կատարում:



րումային հիմնադրամ է լինելու:

Իսկ երրորդը՝ մասնավոր ներդրումների հիմնադրամն է, որը Վրաստանի քաղաքացիների եւ օտարերկրացիների համար կվերածվի գործընկերային հիմնադրամի, որոնք Վրաստանում ցանկություն կունենան իրականացնել ներդրումային նախագծեր: «Այդ հիմնադրամը կֆինանսավորի նման նախագծերի 25-65 տոկոսը, եւ դրանում կկուտակվի շուրջ երկու միլիարդ դոլար»,- հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին: Վարչապետը նշեց, որ ինքը մտադրել է այդ հիմնադրամում ներդրել նաեւ սեփական միջոցները: Նա կոնկրետ չնշեց ներդրումների ծավալը: «Դա ոչ մի նշանակություն չունի, քանի որ տվյալ պարագայում նշանակալի մասնավոր հիմնադրամի գործունեության սկզբունքն է, որը ֆինանսավորելու է Վրաստանի համար օգտավոր նախագծերը»,- ասաց նա:

Վարչապետն ընդգծեց, որ այդ հիմնադրամին իր մասնակցությունը ազդեցություն չի գործի դրա ազատ գործունեության վրա, քանի որ այն գլխավորվելու է անկախ կառավարիչը:

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻՆ ԿՏՐՎԵՆ ՍՊՈՐՏԱՎԱՅՆ ՎԱՐԿԵՐ

Փետրվարի 5-ին, լրագրողների հետ հանդիպմանը, Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին հայտարարեց, որ գյուղացիներն ու ֆերմերները կկարողանան ստանալ 5-ից մինչեւ 100 հազար լարիի սպառողական վարկեր: Վարչապետի խոսքերով, վարկերը կտրվեն 7-8 տոկոսարդույքներով:

Ինչպես նշեց Բիծինա Իվանիշվիլին, սպառողական վարկերի տրամադրումը «Վրացական երազանքի» գործունեության ծրագրում չէր ներառված, թեպետ նոր կառավարությունն այն ընկալում է որպես նշանակալից քայլ:

Վարչապետի խոսքերով, վարկերը կտրամադրվեն գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից: «Այս հիմնադրամը կֆինանսավորի նաեւ գյուղատնտեսական աշխատանքները: «Անցկացվել է հողերի գույքագրում, եւ հաստատվել են 640 հազար քաղաքացիների հողամասերը: Ձրոյից մինչեւ 5 հեկտարից հող ունեցող ֆերմերները օգնություն կստանան: Նրանց կտրվեն հողի մշակման, ցանքի, պարարտանյութերի քարտեր: Գյուղատնտեսությունն արդեն փետրվարից անմախքաբար օգնություն կստանա: «Փետրվարի մեկից մինչեւ օգոստոսի մեկը կիրա-

կանացվեն զարմանային աշխատանքների համար սակավահող ֆերմերների օգնության գործարկվող նախագծեր»,- հայտարարեց վարչապետը՝ հավելելով, որ գյուղատնտեսության զարգացման համար երեք տարի ժամկետով ծրագրված մեկ միլիարդանոց հիմնադրամի օգնության ծավալն արդեն այս տարի կազմել է 700 միլիոն լարի:

ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՎԵԼՈՒ ԵՆ ՍՊՈՐՏԱՎԱՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անդրադառնալով երկրի քաղաքացիների համընդհանուր ապահովագրության հարցին՝ Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին հայտարարեց, որ, ամենայն հավանականությամբ, մասնավոր ապահովագրական ընկերությունների մոտ կծափեն հիմնախնդիրներ, թեպետ իրենց աշխատանքը վերակազմավորելու համար նրանք դեռ ժամանակ ունեն: «Պետության կողմից ֆինանսավորվող բազիսային ծրագրից բացի, նրանք կարող են առաջարկել այլ սպասարկումներ: Ուղղակի պետք է վերակազմավորեն իրենց աշխատանքը»,- հայտարարեց վարչապետը:

ԵՐԿՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՂՆԱԾԱՄ ՉԻ ՍՐՉԱՆԱԳՐՎԵԼ

Իր գլխավորած կառավարության 100 օրվա գործունեության արդյունքների հանրագումարմանը նվիրված մամուլի ասուլիսում Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին հերքեց երկրում տնտեսական ճգնաժամի առկայությունը: «Փոքր եւ միջին ձեռնարկությունների շրջանառությունը կազմել է 320 միլիոն լարի, եւ դա գործարարության ազատության ցուցանիշ է»,- ասաց նա:

Խոսելով տնտեսական աճի մեկ տոկոսով նվազեցման մասին Իվանիշվիլին նշեց, որ դա լուրջ համարել չի կարելի, ապա հավելեց, որ տնտեսական ճգնաժամի մասին խոսակցությունները «ընդդիմության հերթական ստերն են»:

ՍՐՉԱՔԻՆ ԶԱՐԱՔԱՎԱՆ ԿՈՒՐՍԻ ԱՆՓՈՓՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՐԵՆ ՉԻ ԱՄՐԱԳՐՎԻ

Բիծինա Իվանիշվիլին սահմանադրական փոփոխությունների հարցով մտադիր չէ «առջուկվառաք» սկսել ընդդիմության հետ: Այդ մասին նա հայտարարեց փետրվարի 5-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ: Նրա խոսքերով, ընդդիմախոսների ձայները պետք չեն, դա նրանց հնարավորությունն է ապահովել քաղաքական որեւէ ապագա»:

Իվանիշվիլին ընդգծեց, որ ինքը մտադիր չէ նաեւ քննարկել ընդդիմության նախաձեռնությամբ առաջարկված սահմանադրական փոփոխության նախագիծը, ըստ որի, սահմանադրորեն ամրագրվելու է ԵՄ-ին եւ ՆԱՏՕ-ին ուղղված արտաքին քաղաքական կուրսի անփոփոխությունը: «Դա ծիծաղելի է, նմանը ոչ մի սահմանադրության մեջ չկա, եւ մենք էլ նման մտադրություն չունենք, թեպետ ԱՄՆ-ին եւ Եվրոպային կողմնորոշված

մեր արտաքին քաղաքական կուրսը ռազմավարական է՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հետ միասին»,- հայտարարեց վարչապետը:

ԻՐԱԿԻ ԱՆԱՄՆԻԱՆ ՉԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՆԱԽԱԿԱԶՄԱԿԱՆ ԳԱԾԱՆԻՇԻՆ

Վրաստանի վարչապետը երկրի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիային ընդդիմության մեջ չի տեսնում: Ինչպես փետրվարի 5-ին լրագրողների հետ կայացած հանդիպման ժամանակ հայտարարել է Բիծինա Իվանիշվիլին, ինքը չի կարծում, թե Ալասանիան այսօր կամ մոտ ապագայում կանցնի ընդդիմության շարքերը:

«Անշուշտ, Ալասանիան, ինչպես եւ Վրաստանի բոլոր քաղաքացիները (իսկ ես, ինչպես դուք գիտեք, դեմնկրատ եմ), իրավունք ունի ընտրել իր ուղին եւ, եթե որոշի դուրս գալ կուսիցիայից, ապա դա նրա իրավունքն է»,- նշել է Իվանիշվիլին: Միեւնույն ժամանակ նա ընդգծել է, որ այդ դեպքում Ալասանիան ստիպված կլինի պահպանել որոշակի կանոններ եւ դուրս գալ կուսիցիայից ու գնալ իր ճանապարհով:

«Բայց ես կարծում եմ, որ Ալասանիան չի համապատասխանում նախագահական էտալոնին, բայց եթե մեր թիմում այլ կարծիքի լինեն, այն ժամանակ կմտածենք»,- նշեց վարչապետը:

Իվանիշվիլին ընդգծել է, որ նախագահի պաշտոնին ավելի համապատասխանում է խորհրդարանի իրավաբանական կոմիտեի ղեկավար Վախթանգ Խմալաձեն:

ԵՐԿՐՈՒՄ ՄԻԱԿՈՒՍԱԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԴԵՏԵ Է ԳԻՆԻՆ

Լրագրողների հետ կայացած հանդիպմանը Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին հայտարարեց, որ մտադիր է «Վրացական երազանք» կուսիցիայում պահպանել ուժերի հավասարակշռությունը, որպեսզի երկրում չհաստատվի միակուսակցական կառավարում՝ հավելելով, որ թեպետ կուսիցիայից դուրս ինքը իրական քաղաքական ուժեր չի տեսնում:

Վարչապետի խոսքերով, ինքը թույլ չի տա միայն իր կուսակցության հզորացումը: «Մենք հնարավոր ամեն ինչ կանենք, որ թույլ չտանք միայն մի կուսակցության հզորացումը»,- ընդգծեց վարչապետը:

ՆԱԽԱԿԱԶԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՎԵՐԱՅՎԻ

Անդրադառնալով սահմանադրական փոփոխությունների հարցին՝ ըստ որի, երկրի նախագահին ընտրելու է խորհրդարանը, վարչապետ Բիծինա Իվանիշվիլին հայտարարեց, որ նման հարց օրակարգում չի դրված: «Այդ հարցով ես ունեմ կոնկրետ դիրքորոշում, սակայն ցանկանում եմ հաստատել, որ նոր կառավարությունը նման նախաձեռնությամբ հանդես գալու մտադրություն չունի»,- հայտարարեց վարչապետը:

«Յանձնիմա Միխեիլ Սաակաշվիլու, մենք ճանաչում ենք Վրաստանի նախագահի, դրանով իսկ մենք ելուն ենք առկա իրականությունից»,- նշեց Բիծինա Իվանիշվիլին:

Նա բոլորին կոչ արեց հարգել նախագահին: «Մենք կուլտուրական ազգ ենք եւ, ելնելով ավանդույթներից ու պատմությունից, ընդունում ենք իրականությունը եւ բնականության այն հատվածին, որը նրան որպես նախագահ ճանաչել չի ցանկանում, համբերության կոչ ենք անում»,- հայտարարեց վարչապետը:

ԱՆՅԱԾ 100 ՕՐԵՐԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՐԳ ՄԻԱՍՆԵՐ ՉԻ ՈՒՆԵՅՆԵԼ

Յանրագումարելով իր գլխավորած կառավարության 100 օրյա գործունեության արդյունքները՝ Վրաստանի վարչապետ Բիծինա Իվանիշվիլին լրագրողների հետ հանդիպմանը հայտարարեց, որ կառավարությունը լուրջ միասնական թույլ չի տվել: «Մենք շատ զգույշ ենք աշխատում եւ ճիշտ ենք վարվում: Կան աննշան հիմնախնդիրներ, եւ մենք անմիջապես արձագանքում ենք»,- հայտարարեց վարչապետը: